

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

16.10.2019

Ուժը կորցրած է ճանաչվել «ԱՐԱՆԳԵԼ ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ գրավատանային գործունեության լիցենզիան

ԿԲ խորհրդի հոկտեմբերի 11-ի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել «ԱՐԱՆԳԵԼ ՊՐՈՎԱՅԴԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված՝ ՀՀ, ք. Երևան, Արուսյան 35 շ., 4 տարածք հասցեում գտնվող տարածքում գրավատան կազմակերպման թիվ ԳԳ-Ե 228 լիցենզիան (տրված՝ 21.03.2011թ.)՝ գրավատան կազմակերպչի դիմումի համաձայն:

Սահմանվել է, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից գրավատունն իրավունք ունի կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք կապված են մինչև լիցենզիայի գործողության դադարեցումը կնքված վարկային և պահատվության պայմանագրերից բխող իրավունքների և պարտականությունների կատարման հետ:

«ԱՐԱՆԳԵԼ ՊՐՈՎԱՅԴԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձանց միջև կնքված վարկային և պահատվության պայմանագրերը կարող են սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից կողմերի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի 1-ին մասի, վարկառուների կողմից վերցված վարկը և մինչև պայմանագրի լուծման պահը դրա դիմաց սահմանված տոկոսները և գումարի օգտագործման հետ կապված այլ վճարները մարելուց, պահատվության պայմանագրի դիմաց վճարումները կատարելուց, ներառյալ՝ գույքի պահատվության հետ կապված գրավատան կրած սովորական և արտակարգ ծախսերը հատուցելուց և գրավատան կողմից որպես գրավ կամ ի պահ ընդունված գույքը վերադարձնելուց հետո:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

հեռ/ֆաքս. (010) 56 37 61

էլ-փոստ. mcba@cba.am

www.cba.am